

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2005թ. հունվար-հունիսին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 103.6 մլրդ. դրամ, որը 2004թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը գերազանցել է 10.2%-ով: 2005թ. հունիսի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է 2005թ. մայիսի 172.3%-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ճյուղերի ունի հետևյալ պատկերը՝ բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է 26527.4 մլն. դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի մակարդակը 51.8 %-ով, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքը կազմում է 77076.7 մլն. դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի մակարդակը 0.7 %-ով:

Հանրապետությունում ավարտվել են գարնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները:

Ցանքերի եզրափակիչ համատարած հաշվառման տվյալներով, առ 01.06.2005թ. դրությամբ, ընթացիկ տարվա բերքի տակ հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունները կազմել են 329.0 հազար հեկտար 2004թ. 318.3 հազար հեկտարի դիմաց կամ 10.7 հազար հեկտարով ավել:

01.06.2005թ. դրությամբ բերքի տակ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքային տարածությունները

(հազար հեկտար)

Մշակաբույսերի անվանումը	2005	2004	2005թ. 2004թ. նկատմամբ, %
Հացահատիկային և հատիկա-ընդեղենային մշակաբույսեր	210.0	206.0	101.9
Կարտոֆիլ	34.6	35.6	97.2
Բանջարանոցային մշակաբույսեր	22.4	22.4	100.0
Բոստանային մշակաբույսեր	3.9	3.8	102.6
Տեխնիկական մշակաբույսեր	0.5	1.2	41.7
Կերային մշակաբույսեր	57.6	49.3	116.8
ԸՆԴԱՄԵՆՆՆ ԳԳ	329.0	318.3	103.4

Հանրապետությունում ընթանում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքները: Օպերատիվ տվյալներով՝ 1.07.2005թ. դրությամբ, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը, բացառությամբ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի, գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի մակարդակը: Պտղի և հատապտղի համախառն բերքն ավելացել է 35.3 հազ. տոննայով կամ շուրջ 30 անգամ, կարտոֆիլինը՝ 21.3 հազ. տոննայով կամ շուրջ 4.2 անգամ, բանջարանոցային մշակաբույսերինը՝ 14.2 հազ. տոննայով կամ շուրջ 2.7 անգամ:

Անասնաբուժական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2005թ. հունվար-հունիս	2005թ. հունվար-հունիսը 2004թ. հունվար-հունիսի նկատմամբ, %	2005թ. հունվար-հունիս	2005թ. հունվար-հունիսը 2004թ. հունվար-հունիսի նկատմամբ, %	2005թ. հունվար-հունիս	2005թ. հունվար-հունիսը 2004թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
ք.երևան	0.2	100.0	1.9	111.8	21.9	93.2
Արագածոտն	4.1	105.1	34.9	104.5	12.9	84.3
Արարատ	3.3	103.1	22.6	103.7	20.3	89.4
Արմավիր	4.6	109.5	19.6	102.6	19.4	88.2
Գեղարքունիք	5.9	103.5	53.8	103.7	20.5	91.9
Լոռի	3.8	105.6	35.5	102.6	12.8	76.6
Կոտայք	3.9	100.0	31.2	108.0	112.1	91.1
Շիրակ	5.2	104.0	45.3	103.9	19.1	92.3
Սյունիք	3.0	100.0	25.7	103.6	7.3	91.3
Վայոց ձոր	1.3	100.0	11.4	100.9	6.2	87.3
Տավուշ	2.8	103.7	20.8	102.5	10.3	92.8
Ընդամենը ՀՀ	38.1	102.7	302.7	103.9	262.8	89.8

2005թ. հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, անասնաբուժական հիմնական մթերքի արտադրության ծավալները՝ բացառությամբ ձվի ծավալից, ավելացել են: Այսպես՝ իրացված մսի ծավալները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 1.0 հազ. տոննայով, կամ 2.7 %-ով, կաթինը՝ 11.3 հազ. տոննայով կամ 3.9 %-ով:

Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի ծավալներն, ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի

	Կազմակերպությունների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Թողարկված գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, մլն. դրամ	2005թ. հունվար-հունիսը 2004թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
Ընդամենը <i>այդ թվում՝</i>	64	1682	7529.8	88.5
մինչև 5 մարդ	32	86	29.0	36.6
6-50 մարդ	26	392	527.8	63.7
51-100 մարդ	1	52	122.2	45.9
101 և ավելի	5	1152	6850.8	93.4

¹ Ներառյալ ներքին սպառումը: